




Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
լվանգամայն մեխանիկ
կը գտնուի

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՐԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՄԱՍՈՒՄԱԿԱՆ
ՇԱՐՔԱՆԳԱՆ

- | | |
|--------|--|
| ԱՆՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիպէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԵՒՍԱՐ | Չարչը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երախաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին՝ կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւզօղլուի տունը:



ՐԵԻԵԼՔ ՕՐԱ-

ԹԵՐԻՒ ազգային, գրական եւ քաղաքական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դր., վեցամսեայ 45 դր.: Գաւառներու համար տարեկան 108 դր., վեցամսեայ 60 դր.: և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառում՝ քաւր փարա: ԱՐԵԻԵԼՔ հրա լարակ կ'եղէ ամէն օր, կէս օրին, խընաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

բով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, և կ'եղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բայց ի գրական, բանասիրական գրութեան, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագին պէտք է ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին Էֆ. Պօյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խմբագրատունը:



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՐԱԹԱԹԵՐԲ

ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԴԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՌԻ ԹԻԻ 5

ՇԱՐԱԹ

29 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1907



ՏԷՐ ԵՒ ՏԻԿ. ՆԱՄՈՒՐ



ՏԻԿԻՆ ՆԱՄՈՒՐ

Ահա պատկերները այն արի եւ վեհերոս այր եւ կնոջ որոնք կրցած են Մօն Պլանի էն անմեռնելի սառնապատ գագաթները ելլալ վերջերս :

Խմբագրութեանս մասնաւոր հրաւերին ի պատասխան՝ արդի գրական հրապարակին էն ջղուտ և սիրուած գրագէտ-Տարեցոյցագիր Տիար Թէոգիկ մեզ կը հասցնէ նմոյշ մը իր 1908 ի Տարեցոյցէն, որուն բովանդակութեան և նորոյթներու ստուարութեան վրայօք հիմակուհիմայ բան մը չենք ըսեր։ Սակայն պարզ թուրքերանութեամբ մը կը յիշենք թէ՛ 1908 ի ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ գլած անկած է նախորդը որ՝ ձեռքէ ձեռք խլուեցաւ։

ԲԱՐԵՇՐԶՈՒԱԾ ԱՆԷԾՔՆԵՐ

Ծա՛կ ծա՛կ ծակծրկիս ... երբ երուսաղեմ հաճի բանին քելիդ։
Ասուծմէ՛ գնաս ... ասոր հազար ոսկի։
Գեսնին աս՛կը անցնիս ... Ղալաթիայէն Բերս երբալու համար։
Ա՛ջիդ կուրնայ ... ծերութեանդ մեջ, հի՛ւր մահուանդ օր։
Դո՛ւն դո՛ւն մուրաս ... Կաղանդին գիշերը՝ յանուն «Աղբասխան» ի։
Քիթիդ բերնէ՛դ գայ ... սասիկ հարբուխիդ ասեմ։
Սեւե՛ր հագնիս ... կանչըցած լաթերդ ներկի տուած ըլլալով։
Ձեռուրնե՛րդ փառուի ... ձմեռը, կրակին մօտէն, չ՛երելու համար։
Զարի՛կ չարի՛կ գաս ... երեկոյթի մը խօլ պարերուն գիրկը։
Կերածդ խմա՛ծդ վըսխես ... սխալմամբ բուճաւորուելէ վերջ։
Զը հասնի՛ս ... փափաքած նաւամատոյցդ չի հանդիպող Շիրէքի շոգեմաւին։
Ճրւի՛կ նըւի՛կ գաս ... անուտ անուտ գեղգեղող սոխակի մը դիմաց։
Զարնուի՛ս ... երկաթուղիի առաջին պարգետով։
Աւուր հացի կարօ՛ւս ըլլաս ... պարկերով պարեն՝ մառանդ լեցունելէ ետք։
Անմաս անհաղո՛րդ ելլաս ... չար դիպուածներու մեջէն։
Անկըծակներո՛ւ գաս ... անակնկալ երջանկութիւն մը ողջունելով։
Ո՛սիդ բռնուի ... փչ մը ասեմ՝ անշարժ մնալէն քմեղելով։
Ծովերն ՚ի վա՛ր երբաս ... երբ սուզակ ես։
Ճարի՛կ նարի՛կ գաս ... կուտ ու կուտ խնդալէն։
Լեռնե՛րը մնաս ... ամառը՝ լորամարգիի որսորդութեանդ։
Երբալդ ըլլայ՝ գալդ չըլլայ ... ամուսնական կեանքէդ։
Առնուիս բռնուի՛ս ... նշմարիս Սիրոյ ցանցին մեջ։
Պօյը՛դ օրջի ... ֆնատութեանդ՝ կակուղիկ անկողիններու վրայ։
Կերած կարդ հառա՛ւ ըլլայ ... երբ կտրած է։
Ուն՛նիս վերնայ ... նոր խաներու «ասանսկոն» ներովը։
Զի վայլես չի վայլեցունէ՛ս ... քեզի համար փափաքածները՝ բեճամիներուդ։
Զի՛քը յորդիս ... օղապարհով նամբորդելու միջոցիդ։
Լեզո՛ւդ բռնուի ... սիրահարիդ շուրթերուն մեջը։

ԹԻՖԼԻՍ

ԲԵՐԱՅԻ ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

— Կը քնանայ կոր ըսին, ժամը չորսն է և զեռ սինեակէն չէ ելած, քանի քանի անգամներ գացինք իր ննջասենեակին դուռը վարնել, ձայն չի տուաւ, բայց կերեւայ թէ կը քնանայ . . . :

Խօսք տուած էի այցելել իրեն՝ այդ կիրակին, առաւօտուն կանուխ, որպէս զի միասին եկեղեցի երթանք: Աստուածածնի տունըն էր:

Պայծառ օր մը, պայծառ արեւ մը կարծես ընդհանուր պայծառութիւն մը սփռած էին չորս դին: Ամբողջ թաղը քրիստոնէական վառ զգացումներով տոգորուած, կին աղջիկ, ծեր ու պզտիկ, բոլորն ալ հապճեպով Տաճար կը դիմէին տօնելու Աստուածամայրիկին նուիրական և սուրբ օրը, և նոյն իսկ էն սկիզբիկ երիտասարդներն այդ օրին, գոգցես հաւատքով լեցուն՝ դէպի Եկեղեցի կը շտապէին, լուրջ և ջերմութեամբ գրնացքով մը:

Պատմանս համեմատ՝ գացի Հերմինէին, սրտնեղած, քիչ մը ուշ մնալուս համար, և ահա դրան սեմին վրայ իմացայ թէ կը քննանար, ա՛յն Հերմինէն որ, ինչպէս ուրիշ պարտաճանաչ աղջիկ, սովոր էր վայրկեանը վայրկեանի պահել իր խոստումը, նա մանաւանդ որ, ինքը թող ու ծոյլ ընտելութիւն մը չուներ, և գիտէի թէ արեւէն իսկ նախանձելով՝ անկէ առաջ կուզեր արթննալ առտունները:

Եւ որովհետեւ մեր մտերիմ ընկերութիւնը կը ներքեւ որ ուղղակի իր ննջասենեակը ելլայի, ինչպէս ուրիշ անգամներ, ուստի առանց վարանելու, և քիչ մըն ալ մտաւտանջութեանս յազուրդ տալու համար, չիտակ վեր ելայ:

Երկրորդ անգամ դուռը վարնելու հարկ չեղաւ, առաջին թըք թըքիս իր նէկիթէ վիճակին մէջ ցատկէց բացաւ դուռը, և երկուքս պահ մը մնացինք հոգ գիրկընդխառն:

Բայց Հերմինէ, դառնապէս կուլար: Իր վառ աչքերը՝ որոնք ուրախութեան

և խնդի զոյգ աղբիւրներ էին, հիմա՝ ցաւի, տառապանքի և հասնումի ծորակներ դարձած խոշոր խոշոր կայակներ դուրս կուտային, կայակներ՝ որոնք ուսերս կը թրջէին:

Ի՞նչ եղած էր արդեօք, ի՞նչ կրնար ըլլալ անմեղ այդ հրեշտակին ցաւը, խռովքը:

Պահ մը այդ վիճակին մէջ մնալէ յետոյ, զիս տարաւ նստեցուց Պօթոյին մէջ ու սկըսաւ հապճեպով հագուել, շտկուել:

— Հիմա՛, հիմա կ'ըլլամ հոգիս, խօսք առաւ հեծկտագին, կը ներես անշուշտ ուշ մնալուս համար, բայց երթալիք տեղերնիս, սովորական մահկանացուի մը այցելութիւն չըլլալուն, հարկաւ ներողամիտ կը գտնուի Աստուածամայրը, որուն խօսք բրած էինք աղօթել, չի նեղանար այնպէս չէ՞ . . . :

— Անշուշտ, ըսի շուարած, և բան մը չի կրնալով հասկնալ այս անակնկալ դէպքէն, որ ատեն որ ըլլայ կրնանք ծնրադրել իր առջեւ, բայց քու այս վիճակդ ինձ վախ, մըտաւտանջութիւն և քիչ մ'ալ սոսկում կը պատճառէ կոր Հերմինէս . . . ինչո՞ւ:

— Պիտի հասկնաս, ինչպէս ես հասկցայ, դուն ալ պիտի հասկնաս հոգիս, ըսաւ նորէն նորէն արցունքներ յորինելով իր զոյգ պըլպըրներուն մէջ, ես երեկ իմացայ, դուն ալ այսօր պիտի իմանաս, և . . .

— Այո՛, և անշուշտ ես ալ մասնակից պիտի ըլլամ քու ցաւերուդ, քու յոյզերուդ, քանի որ . . .

— Այո՛, քանի որ գիտեմ թէ զիս պարզ սիրով մը չէ որ կը սիրես հոգիս, գիտեմ և կարելի է ինձմէ աւելի յուզուիս . . . բայց հերէ որ հագուեմ և ժամ առաջ դուրս իյնանք . . . :

Այ խօսք մը բառ մը չի կրցանք փոխանակել, ան իր հագուելուն ղեաղած ու ես լուծելու այս տխուր ու մութ հանելուկը, զոր կը պարզէր մտերիմ ընկերուհիս Հերմինէն:

Հերմինէն դպրոցական օրերէս կը ճանչնայի, թէեւ ես իրմէ տարի մը առաջ չըր-

Չանաւարտ, սակայն իր ծանր գլուխ և տիպար վարքն ու բարքը զիս անանկ մը կապած էին իրեն որ, մէկ քրոջ պէս կը կենակցէինք դպրոցին մէջ, և անկէ դուրս մինչեւ վերջը երկուքս ալ պահեցինք անկեղծ բարեկամուհիի մը անարատ մտերմութիւնը:

Հերմինէ, բարեկեցիկ ընտանիքի մը զաւակն էր, հայրը՝ պատուաւոր և գործոն մարդ, կը գուրգուրար իր մէկ հատիկ աղջկանը վրայ, գալով մօրկանը՝ չեմ գիտեր ինչու չէի տեսներ այն սաք վերաբերումը, զոր մայր մը կը պարտի իր հոգեհատորին հանդէպ:

Եւ որ աւելին է, մայր և աղջիկ քրոջ պէս մէկ տարիք կերեւային, այնքան մանկամարդ էր ան:

Մօր և աղջկան միջեւ տիրող այս ցրտութիւնը շատ անգամ յիշեւ, մօրկանը զարգացման պակասին կը վերագրէի, և չէի ուզեր ճանկրթել հեգ աղջկանը սիրտը, զգացընելով՝ բացատրութիւն պահանջելու համար:

Տանը մէջ ամէն բան կարգին էր, բարեկեցիկ ընտանիքային մըն էր իրենց տունը, որուն ի տես՝ մասնաւոր ուրախութիւն մը կը զգայի, կը հրճուէի Հերմինէն այդ տան մէջ տեսնելով ուրտիս զուարթ:

Կէս ժամ չի տեսեց իր պարզ ու համեստ աղջկան թուալէթը, ու երկուքս մէկ ճամբայ ելանք դէպի Եկեղեցի, ուր խորհուրդները արդէն սկսած և աւարտելու մօտ էին:

Ամբողջ տաճարը լեցուն էր երկսեռ բազմութեամբ մը, մինչ խունկը կը միար փորուրաններու մէջ, իր անուշ կապոյտ ծուխը տարածելով չորս դին, մինչ դպիրներու ներդաշնակ երգեցողութիւնք՝ հաւատ կը հրաւիրէին է՛ն սկեպտիկն իսկ՝ Աստուածամօր տօնին ի պատիւ կատարուած այդ սրբանուէր պաշտամանց համար:

Հերմինէ սեփ սեւ պարզ քօստիւմ մը հագած էր, սեւ գլխարկով, կատարեալ սուգի զգեստ մը, զոր սովոր են կրել ծնողաց միոյն կամ միւսին կորստեան առթիւ: Ծերմակ թաշկինակ մը կը քամեր կրակոտ աչքերէն կաթկթող արցունքի չիթերը, մինչ ես, եղելութեան անգիտակ՝ քովը կեցած և

ոչ մէկ հիմնաւոր պատճառի կը վերագրէի իր այս նշանակալից երեւոյթը և արարքը:

Վերջին հայրմերէն ետք շատ մը հաւատացեալներ դային ծնրադրել պատարագութիւն Աւետարանին ի լուր: Շատեր մեկնած էին հիմա, և ահագին Տաճարը՝ որ քիչ մը առաջ լեցուն էր, տակաւ կամայանար:

Հոս հոն մէկ քունի ծերունիներ, դեռ կը չարունակէին իրենց աղօթքը մրթմրթալ՝ համրիչ ի ձեռին:

Եկեղեցական դասը քաշուած էր ալ ու միմիայն լուսարարը կար, որ մոմերը մարելով կը զբաղէր:

Չորս դիս նայեցայ, ոչ ոք կար բացի մենէ: Հերմինէն դեռ կաղօթեր ծնրաչօք, և թափած արցունքները ձեռքի սաղմոսին գիւրերը կը պողեցնէին:

Յանկարծ վեր ելաւ քովէս, ձեռքէս բռնեց ու շիտակ մեծ խորանին առջեւ տարաւ, որուն վրայ կը սլանծար Մարիամ Աստուածածինը, հեզահամբոյր խնդումներս:

Ալ ոչ ոք մնացած էր Եկեղեցոյ մէջ, նոյն իսկ լուսարարը գացած էր հանելու իր շապիկը:

Հերմինէ պոռթկաց:

— Մայր... դո՛ւն լսէ իմ տկար աղօթքս, դո՛ւն լսէ իմ աղաչանքս, և դո՛ւն, ո՛վ Մայր Աստուածածին, դո՛ւն պաշտպան կանգնէ իմ արդար իրաւունքներուս: Ես, այո՛ ես, մայր չունիմ եղբր, ... դեռ նոր իմացայ, իմ մայրիկս, շատոնց, զիս ծնելէ վերջ քու մօտդ առեր ես, քու հրեշտակներուդ խառներ ես զանիկայ, և այսօր այն կինը՝ որուն մայր ըսելով վիզը կը նետուէի, իմ բուն մայրս չըլլալով՝ հորս պարզ մէկ ընկերուհին է եղէր... Դո՛ւն... ո՛վ Կոյս Մարիամ, դո՛ւն պիտի ըլլաս այլեւս իմ պաշտպանս, և Քեզի, Քեզի միայն պիտի համարձակիմ մայր կոչելու: Այսօր քու Սուրբ անունդ կը տօնենք, այս օրին կաղաչեմ քեզի, կամ թոյլ տուր որ մայր կոչեմ քեզի, և կամ զիս ալ առ, զիս ալ առ ու յաճնէ մօրկանս՝ որ քովիկդ է...: Անտէր անպաշտպան աղջիկ մ'եմ ահա, որ կուգամ ծնրադրել պատկերիդ առջեւ, խօսք տուր... խօսք տուր որ պիտի պաշտպանես զիս օտարունիին առջեւ, որուն զաւակը ըլլալ կը

Կարծէի, և սակայն չեմ: Դուն զիս պաշտպանէ անոր չարակամ թակարդներէն, զորս պիտի լարէ ինձ դէմ: Դուն ոյժ տուր ինձի որ կարենամ տանիլ այս բռնը, մինչեւ որ մայրիկս զիս կանչէ: Ծնրագիր կաղաչեմ, արցունքներս՝ որոնք հոս պատուանդանիդ տակ կը հոսին, թող վկայեն մօրկանս թէ՛ անոր յիշատակը ջահի մը պէս միշտ վառ պիտի ըլլայ սրտիս մէջ:

Թմբեր եմ հող, իւրուր Հերմինէի անաւ կընկալ յայանութիւններուն: Այն կինը, որուն մայր կըսէր հեգ աղջիկը՝ իբր չէ եղեր: Խեղճ աղջիկը ուրկէ կուհներ է չեմ գիտեր, և ահա ինչու եկեր է կաղօթէ Աստուածամօր, որպէս զի պաշտպանէ զինք հանգէպ անձամօթին ու չարին:

Մարդկային ընկերութեան մէջ նմանօրինակ պարագաներ չեն պակսիր, բայց երանի այն կնոջ՝ որ իր խորդ զաւկին չզգացներ իր օտարութիւնը:

ԶԱԶԱ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ ՎԵՐԵՐԵԻՈՒՄԸ

Յառաջիկայ Հոկտ. 1-ին սկսեալ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ լիբրարիին պիտի հրատարակուի մեր խմբագրապետութեամբ: Թերթին նկարական մասակարարութիւնը ստանձնելով՝ գոյութիւնըն եւ յարատեւութիւնը հաստատուն կառուանի մը վրայ դրած եւ քերթն ընթերցասէր հասարակութեան մասշնիլի եւ հրապուրիչ ընծայելու համար, ծանօթ հրապարակագիրներու եւ կարող խմբագիրներու աջակցութիւնն ապահոված ենք:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ բոս առաջնոյն պիտի ըլլայ օրաթերթ եւ պիտի հրատարակուի ամէն առաւօտ արեւոյսին, պարունակելով օրուան բոլոր պատճօնական, բաղադական, ներքին եւ Պատրիարքարանի լուրերը:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ հին գաւառական բաժանորդները իբրեւ նմոյշ 5 քերթ միայն պիտի ստանան, եւ անոնք՝ որ իրենց հանութիւնը չյայտեն քերթին ստացման համար, քերթ պիտի չընդունին:

Այս նոր հրատարակութեան առթիւ հին բաժանորդներու հաշիւներուն պատասխանատու չենք, եւ մեր բաժանորդագրութիւնները կ'սկսին մեր հրատարակութեան բուականէն:

ՏԱՃՍՏ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱԶՔԵՐԸ...

(ՍԻՐԵՐԲ)

Խօսուն աչքերդ փարփանում պէս,
Կը վառին հոգւոյս տաղտուկ մութին մէջ,
Մինչ հոն մարած են սիրոյ ամէն տենչ,
Մաս մը տանելով սիրախառն արեւ:

Նուաղ նայուածքդ՝ երազն անհունին,
Պատկերը հիւժած արթ մը սիրով,
Մտիդ՝ որ դրախտ մ'է իմ արթիս եով,
Անցեալ սերերու աւերակը հին:

Հիմա՛յ սուտերն ես երբեմնի յստակ,
Քեզի կը դիտեմ հեռուէն՝ հեռուէն,
Պարապներուն մէջ երկնքին անհուն,
Պատկերդ մտիս մէջ է շարունակ:

Շուտան աչքերդ վարդ հրապուրիչ,
Դերիդ ըրին զիս, յափաղած ապուշ,
Հիմա՛յ կը գողամ, քերեւս քիչ մ'ալ ուշ,
Աչքերդ «տառապէ» ըսին ինձ մի քիչ:

Սիրով տառապիլ պէտք է անպատճառ,
Արցունք աչքերուն որ ազնուամայ,
Մարդ առանց վիշտի հողէ անգգայ,
Սիրող արթին ալ՝... խիղճ մը անաչառ:

ԷՏՄՕՆ ՍԷՃԷՐ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Պիլա. — Զ. Տ. էֆ. — Ստացանք ձեր զրկած վեցամսեայ բաժնեգիրը, շնորհակալութիւն ձեր պարտաճանաչութեան համար:

Ասաբազար. — Ս. Խ. էֆ. — Ստացանք անուանները մեր նոր բաժանորդներուն, ներկայիս պիտի ստանաք 1-էն մինչեւ 5 թիւերը ծրար ծրար: Շնորհակալութիւն:

Էփրեմ. — Դ. Դ. էֆ. — Ձեր խօստմանը կսպասենք, ձեր նամակին գործադրութիւնը ո՛ւր մնաց...:

Նոյնպէս կը խնդրենք մեր այն բաժանորդներէն՝ որոց հասցէին չըրամի համար գրած ենք, հաճին ընդ փոյթ մեզ հասցնել իրենց առկախ հաշիւները:

ԲԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

Ս. ԴՍԻԹԵԱՆԻՑ

Մեր Հայ հասարակութեան մեծամասնութիւնը, ըստ իր տհաս տրամաբանութեան, զրեթէ ցած արուեստ մը կը նկատէ դերասանութիւնը՝ ու դերասանն անպարկեշտ, և հազարումէկ միջոցներ ի գործ կը դնէ իւր զաւկները թատրոն երթալէ, մանաւանդ դերասանութեան ասպարէզը գրկելէ ետ կեցնելու համար:

Դերասան ըսելով՝ մերինները տարբեր կ'ըմբռնեն, այսինքն՝ կարեւորութիւն և վարկ չունեցող անձ մը, մինչդեռ ամենէն սիրուելիքները՝ դերասան, ճշմարիտ դերասան անուն կրող անձնաւորութիւններն են:

Այս օր քիչ չատ համեստ ընտանիքի մը զաւակ, արուեստին հրայրքը ունենալով հանդերձ, եթէ այդ գեղարուեստին՝ դերասանութեան աշակերտութեան հետեւի, և կամ զայն իրեն ասպարէզ ընտրէ, այն ատեն ծընողքը, ազգականներն, իրենց բոլորովին անպատուութիւն կը սեպեն, ըսելով՝ «այս ի՞նչ անպատուութիւն մեր գերդաստանին համար, չօժօխնիս օլինճի ըլլայ հէ՛, մեղայ Աստուծոյ, զէյէր կը վայլէ մեզի, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ, ի՞նչ ծունէր քի թէրէնուս եկաւ, խալիս իմանայ նէ ի՞նչ կ'ըսէ, վույ կրակներու կաս հէ՛մէն ծօ տղայ»: Եւ տեղ մըն ալ եթէ դերասանի մը հանդիպին և կամ անոր վրայ խօսուիլը լսեն «հա գիտեմ օլինճի է» վրայ կը բերեն քիթերնուն տակէն չարամտօրէն խնդալով, իբրեւ թէ բանտէն փախած սրիկայի մը համար խօսուած ըլլար. և ասանկներուն համար երկու փարայի գրագիր մը, աւելի յարգ ու պատիւ ունի, քան թէ քաղաքակրթութեան, յառաջդիմութեան շաղիւն հետեւող այդ վեհանձն, անձնուրաց մարդիկը:

Ահաւասիկ տեսէ՛ք թէ մինչեւ ո՛ւր կը հանգի մեր ծնողաց ունեցած գձուձ գաղափարները դերասանութեան մասին, և դերասաններն ասանկ մարդոցմէ թող գնահատութիւն սպասեն...

Դերասան ըսելով՝ ճշմարիտ դերասան ըսել կ'ուզեմ, և ոչ թէ սա քարափին վրայ

խաղացողները և կամ անոնցմէ քիչ մ'ազէկին: Ահա ասոնք են ձեր լկտիօրէն արտասանած բառին արժանի, այսինքն՝ օլինճի, որ իրենց նպատակը՝ լոկ ժողովուրդը շահու գործի է, և ո՛չ ուրիշ բան:

Ինչպէս որ ըսի, դերասան կայ, դերասան ալ կայ, il y a fagot et fagot, որ ձեզի կը ձգեմ զանոնք նախընտրելը, զանազանիլը աղէկը՝ գէշէն, պատուաւորը՝ անպատուէն, բարոյականը՝ անբարոյականէն, այսինքն՝ դատողութիւնը, և որ բարեբախտաբար մեր մէջ չկն պակտիր տաղանդաւոր, բարհամբաւ, պատուաւոր արուեստագէտ դերասաններ:

Ունեցած դերասաններնուս զրեթէ ամէնքն ալ համեստ, պատուաւոր ընտանիքի հայրեր և կամ երիտասարդներ են, որոնք ո՛վ գիտէ ի՞նչ տառապանքներ կրած են, մինչեւ որ մտած են այն դատափետելի անհուն ասպարէզին մէջ:

Գալով դերասանութիւնը՝ անանկներ ունինք, որ մեր կարծեցեալ պատուաւոր կիւնեղն՝ չատ ու չատ աղիւլ, բարոյականի տէր կիւներ են:

Սիրեցէ՛ք դերասանները, անոնք արժանի են ամէն յարգանքի, պատուոյ եւ սիրոյ: Անոնք մեր մաքի հորիզոնին վրայ ծիածանի ժապաւէններ կը ցոլացընեն:

Սիրեցէ՛ք թատրոնը, լաւ դպրոց մըն է ան, բարոյական կենաց արգանդն է, փոքրիկ աշխարհ մըն է հմայքներով, քմայքներով, քաղցրութիւններով չրջապատուած, որ մեր տկար միտքերը կը զարգացընէ, մեզի կը սովորեցընէ ճանչնալ զեղիցիկը, բարին, ճշմարիտը, որ մեր զգացմանց հով՝ ու մեր գաղափարացը թոփչ կուտայ, որ մեր սրբտերուն կը խօսի, զանոնք կ'աղնուացընէ, մեր հոգիները կը վեհացընէ: Դերասանը՝ այն զգայուն մարդն է որ այս ամէնն ընել կուտայ:

Ուրեմն թողէ՛ք պատոնին որ իր կոչման հետեւի:

Արդէն ունեցած դերասաններնուս շատերուն մազերուն մէջ ճերմակը խտացած է, հետեւաբար ժամանակէ մը եթէ կարողութենէ ինչան անոնք, ի վիճակի չըլլան ներկայացումներու մէջ դեր ստանձնելու և ար-

դի ծնողքները եթէ ի վերեւ ըստեաժ լկտի գաղափարին ծառայելով արգելին իրենց գաւաւնները դերասան ըլլալէ և երեւան չգան անոնց յաջորդողներ, այն ատեն թատերասէր հասարակութիւնը բաւական պիտի տխրի՝ հոգ պիտի ընէ, վասն զի պիտի չկարհնայ այլեւս թատերական անմեղ, հաճոյալի ժամանցներ վայելել, քանի որ հիմալուան դերասաններու ստուար խումբը պիտի քիչնայ, և անխարելի պիտի ըլլայ ներկայացումներ կազմակերպելը:

Արգելք մի՛ յարուցանէք այն պատանիին՝ որ դերասան ըլլալու հակում ունի, որ թատրոնը կը սիրէ՝ կը պաշտէ:

Թողէ՛ք որ ուսումնասիրէ գեղարուեստը, քանի որ ձգտում, տաղանդ և անդուստ փափաք մ'ունի ան:

Պատուար մ'ըլլաք անոր, երբ կ'ուզէ նետուիլ կրթական յառաջդիմութեան այդ որրանին մէջ:

Ո՛վ գիտէ ... այն պատանին որ երեկոյթներու՝ ընկերութիւններու մէջ ձեռնոցները իւր դիմացը գտնուող խօսակցին երեսին կը նետէ մի քանի խօսք ուղղելով անոր, որ պզտիկ մենախօսութիւններ կ'ընէ աստ անդ, որ հայելոյն դիմացը անցնելով թատերական շարժումներ կը փորձէ, թերեւս անոր մէջ Ագաթանի մը խանդը կայ:

Վ.Ա.ՀՐԱՄ ՍԵՎԱՃԵԱՆ

Մ Ա Հ

ՍԱՐԳԻՍ ԷՖ. ԳԱՍԱՊԵԱՆԻ

(ՏԱՃԿԱՐԱՆ)

Պարտիզակի մեր մասնաւոր թղթակիցը հապճեպ երկտողիւ մը կը գուժէ մահը՝ յարգուած ուսուցիչ Սարգիս Էֆ. Գասապեանի, որ Տաճկերէնի դասաւանդութեամբ կ'ընթացէր Պարտիզակի Բ. վարժարանին մէջ:

Այս ցուրտ լուրը կը ցնցէ զիս, ու կը տանի ետ՝ մինչեւ տաան եւ հինգ տարիներ, երբ կ'աշակերտէի այդ տիպար վարժա-

րանին մէջ, և ուր նոր սկսած էր դասախօսել հանգուցեալը:

Տաճկերէն գեղեցիկ և կարեւոր լեզուն կ'աւանդէր մեզի Սարգիս Էֆէնտի, և չեմ գիտեր ինչու իր դասերուն կը հետեւէինք այն եռանդով և վերաբերմամբ, զոր ուրիշ և ոչ մէկ դասի կը զգայինք:

Ինքը միջահասակ, միշտ տխուր ու մեղամաղձոտ, ընտանեկան դժբաղդութեան և ապրուստի դժուարութեան կրկնած լուծը ժամանակէն շատ կանուխ ճնշած ու ընկճած էին խեղճը, և այս պարագաները յայտ յանդիման կը նշմարէինք մենք, իր լուրջ դէմքին և բարձր ճակատին վրայ, ինչպէս նաեւ աչքերուն մէջ, որոնք միշտ խոնաւ էին ու արցունքոտ:

Դասաւանդութեան միջոցին լաւ կը յիշեմ, այնպէս կը վերաբերուէր աշակերտներուն հետ, որպէս թէ իր գաւաւնները ըլլային անոնք, հեղահամբոյր, հայրական գուրգուրոտ խնամք մը կը կրէր ամենուն ալ համահուսար:

Դասարանին մէջ՝ ինչպէս միշտ և ամէն ուրէք՝ կը գտնուէին այնպիսի տղաք որ փոխանակ դասաւանդութեանց ունին դնելու խօսակցութեամբ և կամ իրենց տարիքին բերմամբ խելկատակութեամբ կ'անցնէին. Սարգիս Էֆ. առանց չախելու, առանց ո՛ր է գիտողութիւն ընելու կը շարունակէր իր դասախօսութիւնը միշտ կրկնելով՝ « Դիտուողը դուք կըլլաք գաւաւններս, տեսէք ժամբար կանցնին »:

Եւ հաւատացէք, այս ճշմարիտ խրատականը մէկ երկու անգամ կրկնելով կը յաջողէր զսպել է՛ն ըմբոստ և յամառ աշակերտը:

Սարգիս Էֆէնտիի մահը շատ պիտի տրխբեցնէ ամէն անձնք՝ որոնք զինքը կը ճանչնային մօտէն, աւելին անոնք՝ որոնք աշակերտած էին իրեն:

Ցաւակցութիւններս կուղեմ յայտնել ողբացեալ Սարգիս Էֆէնտիի սրբազայնորուն, որոնք չեմ ճանչնար սւ չեմ գիտեր թէ ո՛ւր կը գտնուին, սակայն իբրեւ երախտագէտ սան իւր, կը փութամ իմ խորին վիշտս արտայայտել հոս հրապարակաւ, ի յիշատակ իր նորափակ հողակոյտին:

Վ. ՓԱՓԱՉԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱԼՃԵՊՌԱ

[ՊՍԱԿԻ ՀԱՇԻԻ]

— Մինչև քի խաղէթային մէջը աչքովս չի կարգամ քի, ասկէ հտքը պսակները տուներ պիտի ըլլան տէյի' ... հա չեմ կրնար ըսեր, չիւնքիւ ե'ս գիտեմ ինչ տուի նէ Բուրուին վախտը, հէմ ալ տահա հուրքը մուխը թէփէէս թիւթմիւշ կըլլայ կոր, կըսէ Միրիճան աղան իր կնկանը որ, դէմն անցած հարսնիքը ըլլայ կատարի կը ճուար:

— Ճանըմ աղէ'կ եա, հա տունն է եղէր հա ժամը, ի'նչ ֆառիս կուսնեայ կոր քի, ա'տ չեմ հասկնար կոր, կընդմիջէ տիկին էպրոս յոնքերը թառը հանելով:

— Հասկնալ կուզես նէ, հարսնիքին օրը չախատան դուռն Միրիճան եղիք, ես ալ էպրոս ըլլամ, նայէ քի չօլախի պէս սաղ ծառքը դէպէտ դուրս կելլա'յ մի ...

— Էյ չէ՞ քի ատ մասրաֆները ուր ալ ըլլայ նէ պիտի տրուի, հա' տունը ըրեր ես հա ժամը, չօգ չէ'յ ...

— Չէքիով չէ կընիկ պաթմանով, թօնէլաթօյով կը կըրեն կոր, դո'ւն ի'նչ կըսես կոր, Բուրուիկին վախտին հիսապ բուսուլաթին տահա սալթայիս ճէպն է ...

— Հէմ ժամը ընենք նէ սա էվէլօքուլթիւնը կըլլա'յ քի, գեղ մը հալիս կուգան աղջկանս միւրվէթը կը տեսնան, երկու չիֆթ աղօթք ընող մը էվէլ կըլլայ ...

— Ինծի նայէ էպրոս, ասիկայ չարչափի խըծիպ չէ, ասոր պաշտըղարը մասրաֆ կըսեն, քու խելքդ չի հասնիր կոր նէ պարէ սուս եղիր տէ իմ գիննս թամ ձգէ:

— Անանկ է նէ, տիօրօրքի իզին ելլայ նէ պիտի պէքլէյէն հա' ...

— Պայիթ թուրքի չեն քի քէչէլէնմիշ ըլլա'ն եա, թող պէքլէյէն նայինք ժամուս մարդիքը ի'նչ խարար կուտան ...

— Տղան ֆիթիլը առած պան է, դո'ւն ինչ կ'ըսես կոր ... իլլէ սահաթ մը առաջ ըլլայ կատարի կ'ըսէ կոր, աղջկանը թառաֆը ըսես նէ հաքէզա ...

— Բէք էյի' ... ատոնց կրակը մարենք տէյի, ես մոխրի վրա'յ պիտի նստիմ ...

— Քա ճանըմ եր օր էնէ հարսնիքի մասրաֆ չիպիտի' ընենք ...

— Կէօզլիւմ, պիտի ընենք, պիտի ընենք ամա, ընել ալ կայ ընել ալ, համբերէ նայինք ինչ ճուղապ պիտի ելլայ, պէլքի իզին կուտան տէ տունը կընենք ...

— Աս քիւմէսի խըտար տունը ո'ր մէկ տավէթլին պիտի սըղմոցունես ... իէ՞ ըսէ նայիմ ...

— Տահա աղէ'կ եա' ... տունը պզտիկ է տէյի խթիֆ չին ըլլար, եկողը կուգայ, էն սօն եկողին բէչին կէսը ներս կէսը դուրս տեսնալնուն կիպի, տօլմուշ կ'ըսեն եկողը պոչին վրայ կը նայի եա կը դառնայ ...

— Եազմա չիգայ, ես աղիս միւրվէթը տեսնամ պիտի, աս ալ ասանկ հարկ մըն է ...

— Քեզի ո'վ կըսէ կոր քի մի տեսնար տէյի, տեսիր ամա, գեղացին քիւթիւն ի'նչ տեղը կայ քի թէփէթ լեցուին տէ, որը վար քաշէ որը վեր ... հէմ ալ ատ եկողներուն քիւթիւն առապա պիտի բռնես քի, նաղէնիմները ժամ երթան տէյի, հէմ ալ սայղը սըղները կուզեն քի երկերկու հոգի նստին տէյի ...

— Էյ թամամ է՞ եա, սառտէլա ֆըչիսի ըլլալու չեն, ուռուսումը ան է քի չիֆթ չիֆթ ըլլան ...

— Չըռօզ պալըղի պէս, հախ ունիս ... տահա նէլէր տէ նէլէր, մինակ առապան չէ, անոր կէօրէ ի'նչ ֆանթազիէ մասրաֆներ կըլլայ կոր քի մարդուն աչքերը դուրս կիյնայ կոր, դուն ի'նչ խապար ունիս, ինծի հարցուր ինծի քի վարանները համրողը ես եմ ...

— Աման դուս ալ Միրիճան աղա, չորցուցիր ալթըլս չորցուցիր, կտոր մը մանտիլդ աչկէդ վար առ տէ ֆէռահ ըրէ, մանչ ցաւակ կը կարգես կոր ...

— Ան կը կարգուի տուն տեղ կըլլայ կոր,

ևս ալ ասդին տունս տեղս կը գրգրեմ կոր կընիկ խապար ես, եէէն պիլմէզ սօղորայան պիլիր ...

— Չիյտեմ պիթըխ, մեր տունը ըլլայ Աստուծոյ տունը ըլլայ, սահաթ մը առաջ արդուն սիրար տեղը դնենք տէ ... կըսէ տիկինը վիճարանութեան վերջ տալու համար:

— Ինտոր քի ըսի քեզի, մինչօք քի պըսակը տունը ընելու իզինը չեկայ նէ, մէթալիք մը ձեռքս չեմ առնէր, նէ ալ թըռաշ մը կըլլամ հարսնիքէ տէյի, գիտցած եզիր տէ կէնէ ճանրմ կէնէ կեղիւմ, ըսելով ոտքի կեկայ, և ատենն ալ ուշ ըլլալով՝ աղա տուտու իրենց ննջասենեակը կը քաշուին:

* * *

Ձի դիտցուիր և չէ գիտցուած մինչև հիմա թէ՛ կինը սատանայի ծնունդ է թէ սատանան կնկան, ի՞նչ կընեն, ի՞նչ ձեւ կը բռնեն և ի՞նչ լեզու կը դործածեն անոնք էրիկմարդուն, որուն ջեղերը կը թուլցնեն, միտքը կը փոխեն և կընեն չեն ըներ կը համոզեն ու խօսքերնին քալեցնել կուտան:

Հեռուեալ առաւօտուն Միրիճան աղա 20 % փոխած էր իր միտքը, միւս օրը 40 %, չորս օր վերջ 60 %, շաբաթէ մը 80 % և ... օր մըն ալ եղաւ որ հարսնիքը կատարուեցաւ:

Ինչպէ՞ս, ի՞նչ պարագայներու տակ, չենք ուզիր պատմել, միայն թէ՛ մեր ընթերցողներուն հաճելի խնդուքներ և զուարթ քահանաներ պատճառելու համար չարունակենք մեր պատմութիւնը հարսնիքէն երկու օր վերջ, երբ Միրիճան աղան բաւական մը գումար հետը առած թաղական խորհրդարանը կ'երթայ ծաղքերը վճարելու համար:

Առաւօտուն, երբ դեռ հարս ու փեսայ, ծուկի ճիւղէներ կընէին իրենց առանցիասենեակը, որուն թէեւ առագոտտի սենեակ կը սեն, սակայն փոթորիկը անցած ու առաքատներն ալ պատառ պատառ, հանգարտ ջուրերուն վրայ կը նաւարկէին, Միրիճան աղա հովանոցը թեւը առած ճամբայ ելաւ դէպի խորհրդարան, ինչպէս ըսինք՝ հաշուեյարդարութեան համար:

Եկեղեցիին բակէն մտնելուն, ժամկոչ աղբարը չալվարը աջ ձախ տատանելով դի-

մաւորեց և անմիջապէս ձեռքի հովանոցը առնելով,

— Հրամայեցք աղա, օնիքիլէր վիերն են ...

— Ասծու բարին ժամկոչ աղբար, քիլէրը գօրծ չունիմ, թաղական աղաները կուգեմ, քիչ մը տեսնուիմ պիտի ...

— Հրամանք է, խասկըցայ, հարսանիքի մասարուֆնիէր սի տաս զաննա ... հի հի ... խուռպանդ ըլլիմ աղաս, օր սրտիկէդ բրթի ու ծառայիդ էլ պախշիշ մի տաս, ընոնց չի տաս, անոնք քիւլլիւ կու կուլլին իւ ընծի էլ թէլթիւկ բան մի կու հանին ... աչիլիդ լիւսը սիրիմ, ըսելով կոնակը կը ծեծէ, մինչ Միրիճան աղան սանդուխներէն վեր կեկայ, ճիւղ այն պահուն՝ երբ ներսը խորհրդարանը սոսկալի պոռչտուք մը կանցներ:

— Ի՞նչ ըսել է էֆէնտիմ, հասնիքը ընողը, ճառթ ճուղթը փարայ չընէր, թաքիքէին փարաները համբելու է, հարսը փեսան չօճուխ ունենալին մօտեցաւ, տահա պիտի գան տէ հաշիւ տեսնան ... չօգ չէյ ...

— Իրաւունք ունի էֆէնտին ... տէր տէրները, երթալ գալով ոտքերնին նասըր կապեց, անանկ ճախա ընելը փարայ չընէր, փարաները տալու է ...

— Անանկ է ես, փարաները, փարաները կըսէ ուրիշ մը:

— Ծանրմ ասանկ չըլլար, հաշիւը հանենք դնենք զրկենք, աս վերէսիէ պսակ ընելը ինչ է, չօգ չէյ ... կառնէ ուրիշ մը:

— Մաղսպան երթալու է էֆէնտիմ, մենք մինակ հոս խօսքը կընենք, գործնականին գալուն պէս կը թուլնանք, ճէպրէն առնելու է ...

— Չըլլա նէ արզուհալ կընենք, ի՞նչ ըսել է ...

— Ծօ՛ ժամկոչ աղբար, կը ձայնէ մէջերնէն մէկը, սա եասախճին իլէն միտարը ինծի կանչէ ...

Ու ճիշդ այդ վայրկենին Միրիճան աղա որ նոյնութեամբ մտիկ ըրած էր խօսակցութիւնները՝ վախէն ներս կը մտնայ ...

— Օ՛ ... բարով եկաք հազար բարի ... կըսէ Ատենապետը ոտքի կլլալով:

— Բարի առաքեցաք ... սանկ հրամանեցք, կը ձայնէ ուրիշ մը:

— Աս ինչ մեծ պատիւ Միրիճան աղա, կը յարէ անկիւնէն երրորդ մը:

— Ճանճմ ի՞նչ աճէլէ ըրիք, խօսք կառնէ չորրորդ մը:

— Միրիճան աղային աղուոր չէքէրլի խախլէ մը, կը հրամայէ միւսն ալ:

— Միրիճան աղա, հողիէ կը փչէ, սանկ հրամանեցէք, կըսէ անդիէն մին:

Մինչ Միրիճան աղա շուարած, կը մտածէր թէ՛ արդեօք քիչ առաջուան անկիրթ խօսակցութիւնները իր հասցէին չէին...

— Ասո՞ւ բարին աղաներ, շատ չնորհալաւ եմ, ափ կընէք քիչ մը ուշ մնացի ա՛մա՞նէ իսէ, եկայ քի սա մեր հարսնիքին մասրաֆները թէմիզցունեմ տէյի...

— Օ՛... ի՞նչ աճէլէ ըրիք Միրիճան աղա, տէր ողորմա՛յ... ձեր դրամը մեր մետուէն է... մենք ալ գիտցանք որ հրաման մը ունիք...

— Բաւ լիցի, պարտքս տամ տէ, խնդիր չի մնայ, հէլպէթ դուք ալ ատոր կսպասէիք կոր...

— Ձեր վրայ առնելիք ունենանք Միրիճան աղա, կը ձայնեն մէկ բերան, ի՞նչ կըլլայ եղէր, չորս հինգ վեց օր ետքը թող ըլլար...

— Էյ հա ամա, ատէթ չէ՞ մի եա՛... փարա մըն է քի պիտի տրուի, օր մը առաջ օր մը ետքը... ըսելով Միրիճան աղա մէջտեղի կանանջ սեղանին կը մօտենայ, իբր թէ տամդաւանա սկամպիլ խաղար, մինչ գրագիրը մէկ մէթը երկայնութեամբ արդէն պատրաստած թուղթ մը հանելով՝ պիչ պիչ Ատենապետին աչքին մէջը կը նայի, որպէս զի սկսի կարդալ:

— Էյ շատ լաւ, քանի որ իլլէ աս օր հաշիւս մաքրեմ կըսէք կոր, թող կարդան անգամ մը:

Ու կսկսի ընթերցումը:

— Եկեղեցիին անհրաժեշտ տրուելիք նուէրը՝ տասը օսմանեան ոսկի, աւելին նուիրատուին կամքէն կախում ունի...

— Այո՛, Միրիճան աղան առատածեալն է... անանկ պզտիկ դրամներէն չի փախչիր... կըսեն մէկ երկու թաղականներ սիկառնի՛ վառելով ու հատ մըն ալ հիւրերնուն տալով:

— Հիմա ինծի նայեցէք քի ըսեմ, ամէն բանին եօլը էրքեանը կայ, էկէր մէկալ մասրաֆներն ալ Միրիճանին ծառքը պաց է պիչիմի ձեւեր շտկելու էք նէ, երթամ տունս ըռէհին դընեմ, փարայ վերցունեմ աէ թէ տարիքի գամ... կըսէ մարդուկը, նստած արթուր ետ քաշելով...

— Աման Միրիճան աղա, դիտողութիւն մի ընէք կաղաչենք, արդէն մենք շատ խղճմտօրէն պատրաստած ենք հաշուեցոյցը:

— Նէ իսէ, դուք կարդացէք տէ, ետքէն կը խօսիմ, հիմա հիչ ծան չպիտի հանեմ կըսէ ու կսկսի սիկառը քաշել, մինչ գրագիրը կը շարունակէ իր ընթերցումը:

— Եպիսկոպոսին երկու ոսկի, երկու վարդապետներուն մէկ մէկ ոսկի, չորս քահանայ՝ չորս չորս արծաթ, չորս դպիր քառասունական զրուշ...

— Ադ տեղը կեցիր, կըսէ Միրիճան աղան, գիտնալըս աս մասրաֆով մեռելս ալ պիտի վերնայ, անա՞նկ է...

— Աստուած չընէ... շարունակէ միւսիւ Բարսեղ... կըսէ Ատենապետը...

— Լուսարար՝ երեսուն զրուշ, լուսարարին տղուն՝ տասը, ժամկոյ՝ քսան, միւս ժամկոյին՝ նոյնպէս, ժամկոյին ընկերը՝ տասը, մոմակալ տղոցը՝ տասնական, կառքերուն դռները բացող հիւրընկալին՝ քսան, հովանոց գաւազան պահողին՝ տասը, դուրսի կեցող աղքատաց քաշխուած դրամը՝ քառասուն, տունէն շալ մանթօ բերել տալու համար մէկու մը՝ հինգ, քէօռ Նունեային՝ հինգ, թօփալ Օգսէնին՝ հինգ, սուլու կարպիտին՝ հինգ, այարը պօզուէս ջրհանկիրին՝ հինգ, չորս քաշ մօմի դրամ՝ քառասուն... հարսնաւորներէն ոմանց համար եփուած սուրճի դրամ՝ տասը, անուշ ջուր թաշտելէն գոց չիչէ՛ հինգ:

Ու դեռ պիտի շարունակուէր ընթերցումը այս քառիւթաքիւռ հաշուեցոյցին, կը տեսնեն որ Միրիճան աղան քունը տարեր է արթուն վրայ, և երբ ձայները կը դադրին, Միրիճան աղա աչքերը կը բանայ:

— Խեղ ըլլայ Միրիճան աղա, կըսեն ներկայները շուարած:

— Ախ... չիյտէք, երեկ իրինկուն սիւրիսինէկէն չեմ քնացեր տէ, անանկ աղուոր

նէնի եկաւ քի ատ բուսուլան՝ քունս տա-
րեր է ...

— Տէր ողորմեայ, սիրելի Միրիճան ա-
ղա, քեզի համար է որ կը կարգացուի ...
գիտենք քի հրամանքդ առանց առարկու-
թեան կը մաքրես այս հաշիւները, սակայն
կուզենք որ գիտակից ըլլաւ եղելութիւննե-
րուն, կըսէ Ատենապետը:

— Պէ պապամ, դուք ձեր առշընին չա-
փովը ըրեր եղեր էք, ասդին հարսը փեսան
իրար առեր լմնցուցեր են դործը, ես ալ
սըտեղը գտնուէր եմ նէ հէլպէթ հիսապները
թէմիզցունելու համար է, ֆախաթ ատ լիս-
թային մէջը անանկ բաներ կայ քի պիր միւմ-
քիւն զինս չառներ կոր, կըսէ Միրիճան ա-
ղան աչքերը արեւմուք դարցնելով:

— Խնդրեմ գիտողութիւն չի վերցունէր,
ասիկայ մեր եկեղեցւոյ կանոնն է որ քութ
քըքութ պէտք է գործադրուի կըսէ ակնո-
ցաւոր թաղական մը, որ գաղիէրէն ալ գի-
տէր:

— Հրամմեր ես, կուտերը համրելու է
ամա, օղլում գլուխդ գայ նէ կը հասկնաս
քի փարայ համրելը ինչ դու բան է եղէր
տէյի ...

— Շատ լաւ, որ ծաղքերը ձեր աչքին
չատ կերեւան կոր Միրիճան աղա, թուեցէք
կըսէ ուրիշ մը երկու ձեռքերը կանաչ սե-
ղանին վրայ դնելով:

— Ճանրմ ինծի մնայ նէ բիւթիւնը մէկ
ֆազլա են ամա, սա մէջը բաներ մը ըսիր,
մէսէլա, առապային դուռները բացողին իշէն
մէյ մըն ալ մոմի փարան բէք զըթս կուգայ
կոր, ամօթ չէ՞ ես ...

— Կառքին դուռները բացողին տրուած
դրամը ի պատիւ ձեզի է աղա, իսկ մոմերը
վառուած են՝ Միրիճան աղայի մը տղուն
ամուսնութեան ի պատիւ ...

— Էյ բէք էյի ... տասը ոսկի եկեղե-
ցին կըսէք կոր նէ ամ տինչ է, ատ փարա-
յին մէջէն երկու օխա մոմ առնուէր նէ իտա-
րէ չէ՞ր ըներ, սերմայէէն զարա՞ր կընէիք ...

— Խնդիր չէ աղա, բաց կանոն է որ ...

— Կանոնը ես ալ կը հասկնամ ամա՛ ...
աս ալ բէք երկըմ կանոն է եղէր, հիմա ին-
ծի նայեցէք, սա հիսապը ըսկոնթօ ըրէք տէ

վճարեմ, ըսելով՝ ձեռքը գրպանը կը տանի-
մինչ Ատենապետը:

— Ներեցէք, Միրիճան աղա, հոս թիւ-
ճարի մաղաղայ չէ, հոս Աստուծոյ տունն է,
պէտք է գիտնաք որ Աստուծոյ տան մէջ
բազարըն չըլար ...

— Էյ բէք աղէկ, աղէկ քի դուն կըսես
կոր, Աստուծոյ տունը խուլածլամա մարդ
սոյմիշ ընել կա՞յ ... ըսէք նայիմ ...

— Քաւ լիցի, ձեզի ի պատիւ պէտք ե-
ղած ծախքերը ըրած ենք, եթէ առաջուց
գիտողութիւն մը ընէիք, մեր զարիս տէր-
տէրն ալ կրնար պատկել, և անհամեմատ ա-
ծան ... կըսէ թաղական աղա մը ոտքի ել-
լալով:

— Բէք էյի, ըսել է որ խուզիի պէս աս
փարաները տանք պիտի ...

— Անշուշտ և անշուշտ, կը ձայնեն ա-
մենքն ալ:

— Պէքէքեաթ վէրսին նէ մարչ ունիմ նէ
ալ աղջիկ, Աստուած կարողութիւն տայ ան
ծնողքներուն քի պոյ պոյ զաւկներ ունին
տէ սըրավարտի պիտի գան կոտտուին: Ենէ-
քիւն ըսէք տէ փարաները տամ կըսէ ու հա-
շիւի կը նստին:

* * *

Միրիճան աղա տուն դարձին կինը կը
դիմաւորէ,

— Ինտոր ըրիր Միրիճան աղա, պարէ
կոկիկճէ լմնցաւ գործդ, թող քիչ մը թուլ
չի գտնուէիր տէ տայանմիշ ըլլայիր ... կըսէ
Էպրոս հետաքրքիր չեշտով մը:

— Տայանմիշ եղանք ամա, ոսկիներուն
տայանմիշ եղանք, ես գիտէի քի մինակ մեր
տղան կարգեցինք տէյի, ժամուն թաղա-
կաններն ալ աս մասրաֆով եղան ...

— Չեմ հասկնար կոր, հէմ ալ դող կել-
լամ կոր, բաց ըսէ քիչ մը ...

— Ան խըտար բաց է գործը քի ես ալ
բացուեցայ քէսէս ալ բացուեցաւ ...

— Դող կելլամ կոր Միրիճան աղա, ա-
ճապ քեզի կակուղ գտան տէ էղմիշ ըրին ...

— Քա խելքդ գլուխդ բեր, անոնք ա-
նանկ մաքնա մը խուռմիշ են ըրեր քի չէքի
ինծի, կռանիթ քար ըլլայ նէ խմորի պէս
ուզած պիչիմունն կը դառցունեն կոր ...

— Էյ ...

— Էյիբտէ օլ, փարաները սուլամիշը ըրինք լմնցաւ գնաց ...

— Անապ տունը ըլլար նէ տահա՞ աժան պիտի ըլլար ... Էէ՞, Միրիճան աղա, ի՞նչ կըսես:

— Ես սըլըտարը գիտեմ քի, հարուրին սէքսէն մասրաֆճա ֆառիս կընէր, չիւնքիւ հիշ տէյիլ իսէ մեր տունին չաթըին տակը սըլընմիշ կըլլայինք, աստար ալ տակերնիս բանալու տեղը չէր ըլլար: Հիմա ժամը պըսակ ըլլալուն ֆանթաղիաները քեզի ըսեմ տէ անկճիդ օղ ըլլայ: Մէյ մը քի տունը ըլլար նէ եկող տավէթլին իր առապային փառան ինք պիտի տար, մենք իսէ տասերկու հատին երեք երեք մէճիտիէին օխտը հարուր իծծուն զրուշ փարայ տուինք, էյ ըսէ: Տունը ըլլար նէ մէկ տէրտէր մը պիտի ընէր պըսակը, ժամը ըլլալուն՝ եպիսկոպոս, վարդապետ, դպիր, ձայնաւոր ըսելնիքէն՝ աշխարհքին փարան առին, մեր գործը չորս մէճիտիէյով կըլլար: Էյ ըսէ: Տունը մերը ըլլալուն քերտի մասրաֆ, հարսնիքի համար փարայ տալու տեղը չիգար, ֆախաթ ժամը ըլլալուն տասը օսկի տուինք... էյ ըսէ...

— Վույ Միրիճան աղա խելքիս կուգայ մըսէր ...

— Տունը ըլլար նէ չորս կազով գործերնիս կը տեսնուէր, ժամը ըլլալուն օխաներով մոմի փարայ տուին ... էյ ըսէ ...: Տունը ըլլար է, մարդ պիտի տեսնայ ամօթ է ըսելով՝ սուղ սուղ ֆիստաններ չէր չինուէր, ֆախաթ ժամը եղաւ տէյի գիտես ես ինչտար օսկիս գնաց նէ ... էյ ըսէ ...: Տունը ըլլար նէ մեր վարի օտայի էշեան բէք կոկիկ էր, գործերնուս կուգար, ժամը ըլլալուն՝ ասկէ անկէ խալի ֆիլան ուղեցինք, երկու հատը գողցեր են, ճերմէ պիտի քաշեմ ... էյ ըսէ ...:

— Էյ սուս, վրաս գէշութիւն կուգայ կոր Միրիճան աղա, հէրիք է ...

— Վէլհասըլ տունը ըլլար նէ մէկ պիտի խարճէինքնէ՞ ժամը ըլլալուն ՏԱՍՆԸ ՄԷԿ խարճեցինք ... իշտէ պու ...:

— Էյ հա՛յտէ, գիտնայինք նէ...

— Ա... գիտնայի նէ չէ քի հարսնիք... մանչ զաւակ պիլէ չէի ունենար, դո՛ւն ի՞նչ

կըսես կոր ... Ես գիտեմ ինչխըապ օսկի համրեցի նէ ...

— Ես քեզի բան մը ըսեմ Միրիճան աղա, աս ասանկ թող անցնի, բան մը քի եղէր է, էկէր սատանային ուլմիշ ըլլանք տէ չօճոխ մը ունենա՞նք նէ ...

— Աճէլէ մընէր, սատանային ուլմիշ ըլլալուդ, առաջ թաղականներուն հետ ուլմիշ եղիր կընիկ, պաշխա թիւուր ճար չիգա՛յ ...:

ԲԱՐՈՅԱԿԱՆ. — Պսակը եկեղեցին ըլլալը թէի շատ նպատակայարմար կարգադրուած թիւն մըն է, սակայն թաղական խորհուրդներ պնտք չէ զեղծանեն:

ԼԻԼԱ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

[ԱՐՁԱԳԱՆԳ]

3. ԻՍՊԷԶԻԵԱՆԻՑ

Pardon !

Ամուսնութիւնն է՝ *եշեկ առըսի*,
— Բառօնը կարծեմ *թեշիճեն* ըսի —
Որու *stuf քեել*՝ ո՛չ *caws* ահաբկու
խայթումքն է սուր, մերթ ալ մահացու:


Ամուսնութիւնն է՝ ծով մ'ալեսասան,
Ուր չիկայ հրեւակ, այլ դժխեմ սասան,
Սակ չընե՛ր հոն, նաւը խրել իթէն
Ըլլալու է խիզախ նաւար *ֆաթթէն*:

Ամուսնութիւնն է՝ «*խըռ*» ի խնկաման,
Ոյր մխացողներ կը գոչեն ամա՛ն:
Բայց ափսո՛ս շատոնց, մոխիր ամեն բան՝
Օգուտ չընե՛ր ա՛լ *եանդըն* թուլումպան:

Ամուսնութիւնն է՝ հիցցած սեւ գինի,
Որ կարծեմ փիշ մ'ալ անոյշ կը լինի:
Բայց գայն խմողը կ'ըլլայ զոր *սեշի*
Այլ բացառութիւնք են միշտ յարգելի:

Ամուսնութիւնն է՝ դաւեմ մը յսակ
Չոր կ'ստորագրեն այր եւ կին *սաֆ սաֆ*.
Բայց երբ ֆաւկնիս ըլլայ կըս *կըսա՛կ*,
Ասի՛հօ, բոյր, բոյր, սէ՛ր, կին ու զաւակ:

ՄԻՕԶՕԹԻՍ



Ուր Ամբակում՝ կը յանդիմանէ Ներսէս Վրդ. Բերգլեանը ու... փիլոնը նետած եւ... Մամաս Բերգլեան եղած է...

Սիրելիս:

Այո սիրելիս պիտի ըսեմ, քանի որ... ալ Հայր Սուրբ Հեմ կրնար ըսել քեզի, ինչու որ՝ փիլոնդ ու փակեղդ մէկդի նետեցիր...

Սիրելիս:

Երբեմն, քան երեք տարի առաջ, քեզի Մամաս Բերգլեան կը կոչէին և ետքը վարդապետ եղար և քեզի Ներսէս Վարդապետ Բերգլեան կոչեցին և հիմայ նորէն քեզի Մամաս Բերգլեան պիտի կոչեն, ո՞վ գիտէ վաղը միւս օր՝ Ներսէս քահանայ Բերգլեան կոչելու համար...

Դո՛ւն, ուղիղ ճամբէն չեղեցար. որովհետեւ ծուռ ճամբուն վրայ... հուրիններ տեսար:

Եւ այն ճամբան ուղիղ երեւցաւ աչքերուդ ու մոլորեցա՛ր... մոլորեալ ոչխար:

Եւ քու հովիւդ... Պատրիարքարանը եղաւ՝ որ քեզի ապաշխարութեան դատապարտեց...

Ու դուն սկսար ապաշխարել... քանի մը բառեր մըմուլէ ետքը... որ քեզի չէր վաղիւ վարդապետ, կամ երբեմնի Ներսէս և կամ հիմակուհիմայ՝ Մամաս...

Մոխրի վրայ նստեցար, քուրջ հագար, մարախ կերար... որ ստամոքսիդ շատ ծանրը եկաւ, սաղմոս քաղել սկսար, և երբ Սաղմոսը լմնցուցիր... մէկ քանի հարիւր անգամ. «Ներո՛ւմ կը խնդրեմ» պոռացիր լալագին աչքերով:

«Թո՛ղ դե՛ռ ա՛պա՛շխա՛րէ՛» պոռացին երեսիդ...

Ու դու՛ն, նորէն ինկար ապաշխարու-

թեան գիրկը... փոխանակ կնոջ մը գիրկը իշնալու...

Հի՛նք տարիներ ապաշխարեցիր և գործեցիր... զբարիս, ապաշխարումի աղօթքները ալ գոյ սովորած էիր, և նոյն իսկ անոնք քունիդ մէջը կը կրկնէիր՝ ապաշխարութիւնդ կատարեալ ընելու համար:

Ու նորէն ըսիր «Ներո՛ւմ կը խնդրեմ»:

«Ո՛չ, ո՛չ, ո՛չ, թող քիչ մընալ ապաշխարէ որ կատարեալ ըլլայ» ըսին:

Ու դուն, ա՛լ ապաշխարելու տեղ կը քընանայիր և երազիդ մէջ... հուրիններ կը տեսնայիր... որոնք ծուռ ճամբուն վրայ կեցած էին...

Սրբազանի մը գացիր և սիրտդ բացիր:

«Համբերէ՛...» գոռաց երեսիդ:

Ձէիր գիտէր սիրելիս որ՝ ով որ համբերեցէ... սպաննախ կերեցէ:

Ձեմ ամօթէր քեզի սիրելիս, թերեւս սպաննախը քեզի կը դպչի և կամ չես սիրէր այդ կերակուրը:

Եւ շիտակ շունչդ էֆքէրէ առիր, տուն մը գացիր և սափրիչը կանչել տուիր և՝

«Սա կգա կս մաքրէ» ըսիր:

Սափրիչը թերեւս կարծեց որ հետը ելլեմ միտ կ'ըլլաս և խնդաց...

«Ծօ՛ խրմալը, կգա կս մաքրէ կըսեմ կորնէ բան մը գիտեմ... փարայովս չէ՞ մի...» ըսիր հարկաւ:

Եւ այս անգամ, թերեւս նորէն խնդալով կզակդ մաքրեց և եղար՝ Ներսէսի տեղ... Մամաս:

* * *

Դո՛ւն մարդ չպիտի ըլլաս: Մարդ ըլլալու համար պէտք էր որ փորձառական դպրոց մը երթայիր... հակառակ 51 տարեկան ըլլալուդ:

Դո՛ւն, այո դուն որ դուն ես, ո՞վ երբեմնի Ներսէս Վարդապետ և հիմայ Տիար Մամաս, քեզի կըսեմ, դուն ձախլիկ մոլորեալ ոչխար մը եղար, թող օրինակ առնէիր պաշտօնակիցներէդ... որոնք փորձառական դպրոցէն... չըջանաւարտ եղած են...:

Կը նզովեմ քեզ, Ներսէս կամ Մամաս:

«Անաքեմա՛ նզովեալ եղիցիս»:

ԱՆՄԵՌՈՒԿ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՖՏԻՓՈՒԼԷ. — Ազգ. Հիւանդանոցին նորընտիր յիմարապահը, որ ասկէ առաջ կը պակկէ առջեւ պաղտաւ նստած անձայն անշըշուկ ոսկիներ կը համբէր, այս անգամ յիմարապահի պաշտօնին գլուխը երբ անցաւ, փոխանակ ուրիշները զսպելու, ինքն ալ անոնց նայելով փախուց, և կ'ըսուի թէ նոպան բռնած ատեն զարկած տեղը չորս մատ կ'ուռնայ կոր եղեր... (Յիմարապահ մ'ալ յիմարապահին թող յատկացուի և այսպէս շարունակաբար Ծ. Խ.):

ՄԱԳՐԻ-ԳԻՒԴ. — Հոս կատարուած կրնունքի հանդէսի մը ներկայ գտնուող Սկիւտարցի պարոն մը ինքզինքը այնքան ալքօլի տուեր է որ, պահ մը հաւնոցը ննջարան կարծելով թէ և սրգմիս է ըրեր, սակայն այդ սալօնին մինի մինի հիւրերէն հետը առնելով տուն գարձին, սուրճուրի և բազմիքի պէտք է զգացեր (Օրն ելլայ խազան չեւայ Ծ. Խ.):

ԳԱՏԸ-ԳԻՒԴ. — Հոս տեղի Մօտայի մօտանայն է որ՝ կիրակի իրիկունները պատյոտի ելլող տամաներու ձեռքը ցուրտէն պուտիկ կ'ըլլայ. անմիջապէս բարձրուն կռնակը կուտան (Այս հաշուով տարեց կրնան ալ եռօղաններով պիտի պտաին, չէ՞ Ծ. Խ.):

ՍԿԻՒՏԱՐ. — Աղքատախնամի երեկոյթին, վարի յարկի լօսերէն մէկին մէջ, ճակատի ֆօփօզ մազի թնձուկ մը գտնուած է, կորսնցնողը կը հրաւիրուի ստոնալ զայն՝ մինչեւ այս կիրակի՝ ժամուն բանկալէն:

ԲԵՐԱ. — Աշնան ներկայ զով գիշերնեւրուն, սուլու սուլու հոս հոն պատկող միւսիւները հարբուխ ըլլալով, եռածայն աղմուկ մը կը յորինէն կոր փողոցներու մէջ հեքօւի իրենց անվերջանալի կրկնութիւններովը: (Ուսկուֆա դրէք միւսիւ մօտա է կ'ըսեն ու կը փրկուիք Ծ. Խ.):

ԳՈՒՄ-ԳԱՖՈՒ. Մայր եկեղեցի. — Անցած կիրակի Եռածայնի փորձ մը ըրինք որ... հիացումով ողջունուեցաւ:

ՄՏՔԻ ԶԲՕՍԱՆՔ

Մեր նախորդ թուաբանական Մսփ զբօսանքին ճիշդ լուծումը որ է՝

1	2	3	4	5	6	7	8	9
								9
1	1	1	1	1	1	1	1	0
1								1

Ճիշդ լուծած են Տեարք՝ Վաղարշ Թագաւորեան, Լեւոն Մինասեան, Յարութիւն Դաւանճեան, Միքայէլ Դաւամանճեան, Ալիքսան Զնտանճեան, Ոսկիան Մարգարեան, որոնցմէ Տեար Լեւոն Մինասեան Բերայէն, որ կստանայ մեր հաւաքածուն, և կը խընդրուի որ ներկայանալով ընդունի զայն խմբագրատունէն:

Թէեւ 48 ստորագրութիւններ եւս հասած են մեզ, բայց խնդրոյն բուն թուիք՝ ոչինչ աւելին որ Օի համար ըսուած էր, չի գործածելնուն չեն կրցած մասնակցիլ ճիշդ լուծողներու կարգին:

Յաջորդ թիւով պիտի ներկայացնենք խիստ հետաքրքրական մտքի զբօսանք մը, որուն նմանը երբեք տեսնուած չէ մինչեւ հիմա:



Ահա մեր գեղարուեստական քառթիւն մէկ օրինակը, զոր կը հրատարակենք ի հեճուկս ամէն անոնց՝ որոնք սուտն իրաւ կը կարծեն խօստացուած նուէրները:

Արտօմսք ԱՐՄԻՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասէսի քիւ 52.

ԱՐՍԷՆ ԼԻԻԲԷՆԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԿԻՆԸ

— Ուրկէ՛ց, ուրկէ՛ց, տունը չըջապատուած է, տանիքին վրայ ոստիկաններ կան:

— Քովի տունը:

— Քովի տունին հետ հազորդակցութիւն չունի:

— Միւս յարկերուն սենեակները:

— Վարձակալները կը ճանչնամ, մարդ չտեսան:

— Վստահ ես ամենքը ճանչնալու:

— Ամենքը, դռնա փանը պատասխանատու է անոնց, ուրիշ կողմանէ աւելի զգուշութեան համար, ամէն յարկաբաժիններու մէջ մէկ մէկ մարդ գրի:

— Պէտք է սակայն որ զանոնք բռնեն:

— Ահա ինչ որ ես կըսեմ, պետ, ահա ինչ որ կըսեմ և պէտք է և պիտի ըլլայ, որովհետեւ երկուքն ալ հոս են, հանդարտ եղիք պէտ, եթէ այս իրիկուն չէ վաղը պիտի ունենամ զանոնք, հոս պիտի անցնեմ գիշերը, հո՛ս պիտի պառկիմ:

Իրապէս գիշերը հոն անցուց և հետեւեալ օրը նորէն միւս օրը նորէն, և երբ երեք օրեր ամբողջ և երեք գիշերներ սահեցան ոչ թէ չէր գտած, ձեռք չանցուելիք Լիւբէնը և ոչ նուազ ձեռք չանցուելիք ընկերուհին, այս նոյն իսկ պղտիկ հետք մը իսկ չէր կըրցած գտնել:

Բայց երրորդ օրը ոստիկանատունէն եկած ատենը, Օրֆէվրի քարափին վրայ պարոն Տիւտուիին հանդիպեցաւ որ կառք մը նստէր և ղինքը կանչեց.

— Շո՛ւա, Կանիմարդ, բաւական ժամանակ կորսնցուցինք, հանգիստ ձգէ զիս քու Լիւբէնիդ և խարտեաչ կնոջ հետ, և աչխատինք ուրիշ կողմ մը, ոճիր կայ, կառապոն 134, Հանրի-Մարթէն ծառուղին:

— Ա՛հ, այս գիշերուան սպանութեան համար է ըսաւ քննիչը, Թօլանֆանը ինծի խօսեցաւ, կարեւոր ոճրի մը երեւոյթը չունի:

— Լիւբէնին պատմութենէն ոչ նուազ անշուշտ, բայց այս ձեղի կը հետաքրքրէ թէ ոչ, պարոն տ'Օթուաին սպանութիւնը բաւական կարեւորութիւն ունի:

Պարոնին բնական ապարանքը եկան: Հարցաքննիչ դատաւորը ոճրին երեւոյթը կը հաստատէր, և հոն շատ մը անձեր կը գըտնուէին, ոստիկաններ, երկու բժիշկներ, ծառաներ, որոնք սենեակները և նրբանցքները լեցուցած էին:

Հակառակ իր ոստիկանի սովորութիւններուն, որ նոր ոճրի մը առջեւ գտնուած ատեն կը հետաքրքրուէր, կը դրդուէր, Կանիմարա, մտացիք էք միտքը ուրիշ բանով մը պատած, դիպուածով կերթար կուգար, առանց իմանալու մտիկ կընէր, կը նայէր առանց տեսնելու, երբ, յանկարծ սեղանին վրայ քանի մը բաներ նշմարեց: Ափ մը մազեր, խարտեաչ մազեր, աչքառու խարտեաչ մը՝ ոսկրի պէս փայլուն: Իր պաշտօնակիցներէն մէկուն՝ քննիչ Տիէօզիի հարցուց:

— Ո՛ւրկէ գտան այս մազերը:

— Մեռեալին ձեռքին մէջէն:

— Մեռելին ձեռքէն այս կնոջ մազերը, կին մըն է ուրեմն որ պարոնը սպաններ է:

— Այո՛, ընթերցող կիներ:

— Բռնուած է:

— Ոչ անյայտացած է:

— Ինչպէ՞ս:

— Չեն գիտեր:

— Բայց պէտք է գիտնալ, Էպոռաց Կանիմարա յուզուած:

Եւ աչքերը բացած, այս անգամ, ականջները ուշադիր, սկսաւ ոճիրը իր կարգին ուսումնասիրել:

Այս ոճիւրը ամէն ոք գիտէ, քանի որ շատ ատեն անցած չէ, մեր ժամանակին ամենէն խորհրդաւոր տրամախնային մէկն է, հետեւեալները լրագրիւններէ կարտատպեմ:

« Զօրապետ Պարոն Տօթուա, երկրորդ կայսրութեան ատեն Պէրլինի դեսպանը, այս գիշեր սպաննուած է այն ապարանքին մէջ ուր կը բնակէր եղբօրը մահուընէ ի վեր և որ այս վերջինը իրեն թողած էր:

« Տարիքէ և հիւանդութենէ տկարացած, բացարձակապէս քաշուած կապրէր, մարապետի մը՝ քոյր Օկիւսթի խնամքին տակ և յատկապէս բռնուած ընթերցող Օր. Պ... ի:

« Երէկ իրիկուն, քոյր Օկիւսթի բացակայութեան ատեն, Օր. Պ... ուզեց արդու դարդի սենեակին բազմոցին վրայ անցնել գիշերը. ժամը տասնին, ծառան եկաւ հրամանները առնելու և մեկնեցաւ, ձգելով իր տէրը Օր. Պ... ին հետ՝ որ այն պահուն բարձրը ձայնով կը կարդար:

« Այս ծառան հազիւ թէ քնացած էր, երբ, ելեքտրական զանգակին ձայնը արթնացուց զինքը որ անոր ու Պ. Տօթուաին սենեակին հետ հաղորդակցութեան մէջ էր: Անպարանքով վար իջաւ և դուռը հրեց: Սենեակին մէջտեղը, սեղանին և հայելադարանին միջև իր տիրոջը մարմինը երկնցած էր: Օր. Պ... հոն չէր գտնուէր:

« Իսկոյն տունը իրար անցուց, կառապանը վազեց 16րդ թաղապետութեան ոստիկանապետին: Պ. Շէվալօթ, առանց ուշանալու, եկած էր և առաջին անգամ ոճիւրը կատուգէր:

« Միակ վէրք մը մահ պատճառած էր, վէրք մը վզին վրայ, ուրկէ արիւնը ուժգնակի ցատկած էր և կէտկիտած էր սեղանին վրայի գիրքերը: Բայց անկէ առաջ կոխ տեղի ունեցած էր, ինչպէս կը ցուցնէր սենեակին անկարգութիւնը. աթոռները տապալած, մեծ քրիսթալէ լամպար մը ջարդուփշուր եղած: Արդէն պարոնին դէմքը հաւրեկութիւն մը արտայայտութիւնը կը պահէր և մարմինը գալարած և ինքն իր վրայ կըծուած էր:

« Զեռքին մէջ, մատներուն ծայրը՝ իր ափին մէջ մխուած էր, ուրկէ մազերու փունջ

մը գտան՝ խարտեալ մազերու, աչքառու խարտեալ կնոջ մը մազերը՝ ոսկիի պէս փայլուն, և դիակին մօտը պզտիկ դանակ մը կը գտնուէր, փղոսկրէ կոթով որ ոճրին գործիքը եղած էր:

« Ուրեմն, այս գանակը Օր. Պ... ին կը վերաբերէր, որ կարգացուելիք գրքերուն էջերը կտրելու կը ծառայէր:

« Ատկէ գատ այդ խարտեալ մազերը Օր. Պ... ին մազերուն կը նմանէր:

« Ոճրին պատճառները շատ մութ են, պարոնին դրամապանակին դպցուած չէ, կենթադրուի թէ գործին մէջը գողութիւն չկայ:

« Կը յիշուի դեռ կապոյտ ադամանդին պատմութիւնը, որ բարձր անձնաւորութեան մը կողմէ Պ. ի տրուած էր և յիշեալին մահուընէն ետքը, պարոն Տօթուաի կողմէ գնուած էր:

« Այդ կարծր ադամանդը պարոնին մատներուն վրայ է, և այս գաղտնիքին բանալին հոն չէ, և եթէ, ինչ որ պէտք է կարծել, կապոյտ ադամանդը բնաւ չգտնուի, պէտք է ըսել որ Տօթիւի փողոցի ոճիւրը լուսաբանուած է »:

Բնաւ ատանկ չէր: Հետեւեալ օրուան լրագրիւնները այս վերի տեղեկութիւններուն անստոյգ ըլլալը կը յայտնէին:

« Հանելուկը կը կնճռոտի, գլխաւորաբար երեք կէտեր կը շփոթեցնէ ոստիկանութիւնը, նախ ի՞նչ է ոճրին շարժառիթը, հակառակ ըսուածներուն կապոյտ ադամանդը գողցուած չէ, դեռ պարոն Տօթուային ճկոյթին վրայ է, մատներքարը ներսի կողմ դարձած՝ որ կարծել կուտայ թէ պարզ ոսկի օղակ մըն է: Բայց Անթուան Պրէհամ — այս էր ընթերցող օրիորդին անունը — Անթուան Պրէհամ, ապահովապէս գիտէր մասնին գոյութիւնը, այն ատեն ինչո՞ւ առած չէր. պէտք է ենթադրել թէ, տեսնելով որ պարոնը ելեքտրական զանգակին վրայ կը ծռի, ինքզինքը կորսնցնելով և առանց կապոյտ ադամանդին վրայ մտածելու՝ փախած էր:

(Շարունակելի)

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՌՆՈՅԹԵՆԵՆՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թոփաշեան խան
Սոյի վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանադ
տոկունութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց շիք եւ դիմացկուն ֆաբրի-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Ոսկարկութիւն չկայ, թիւը 2 զըշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—5



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեռայ պէյ խանին
տակ

Թէ յի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Ջինասսանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
րոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտոյի ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարդային:

ԿՈՒՂԵՔ ԵՐԱՆԱԼ ՁԵՐ ՈՒՂԱՅԷՔ ՓՈՍԽԵ ՊԱՐԶՈՎ ՈՒ ԱՆՍԻԱԼ

ՕՐԷՐԿԷՐ ՍՕՏԵՆԱՅ

Երանալ, Երանալ, Երանալ

ԵՐԱՆԱԼ ԳՐԱԲ ՊԵՏԵ ՈՒՆԵՆԱԼ

ԳՐԱԲՆԱԿԱՆ ԼԵՎԵՐՏԵՐ ԳԱՄԱԳՐԵՐՈՒՄ՝ ՈՐԱՆՔ ՎԱՆԵՐԱՅՈՒՄ
ԵՐԱՆԱԼ ՊԱՏ. ՈՐԱՆՔ ԽԱՐԿԷՐ:
ՏՆՈՐԷՆ, ԳԱՅԱԿՐԱԿ, ՕԳՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ՝ ՈՐԱՆՔ ԵՐԱՆԱԼ
վկայեալ, պարկեց ու փորձառու:

ՄԱՆԱԿԱՐԵՑԷՔ, ՁԵՐԱԳՈՐԾԷ ՈՒ ԳՄԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԻԹԵՐՈՒ՝
որոնք գնով աման ըլլան ու տեսակով լաւագոյն:
ՏԵՐՈՅ ՆՈՒԷՐԻ ՀԱՄԱՐ ՁԱՆԱԿԱՆ ՆԻԹԵՐՈՒ՝ ՔՈՒԼՔ, ԳՐԻՅ, ԱՆԼԱՆ,
կաղամար, մաշիս, ֆանակ, սեքալ, ֆաբրիկ, ֆաբրիկսակ,
կալին, գծագրութեան զանազան ներկեր են:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՈՒՆԷ Է ԳՈՐԾԻ ՄԵ. վկայական, վիճակացոյց, բա-
րեմի, պատուանիւ, պատուար, շրջաբերական, նամակագրուի
պահարան են: Ինչ որ ալ ըլլայ սակայն ձեր պէտքը, նախկէ
անգամ մը ՅՈՎԱԿԱՆԵՆԻՍ ԵՐԱՆԱԼԵՆ ՎԱՅԱՐԱՆՆԵՐ
վստահ ըլլալով թէ՛ իսպառած չպիտի ըլլաւ, քանի որ մեր շրջանի
առօրէն ամեն հեղինակներու զաւարեմէն մեր ու ճոխ մթերք
մը անկցուած է արդէն՝ եղած տեսակներուն վրայ. ինչպէս նաեւ
ձեռագործի մանկապարտեղի ու տղոց մուտքի համար առանձին:

Հարցուցէ՛ք ու անմիջապէս պիտի պատասխանուի
այսպէս: Երանալ, Երանալ, Երանալ

ԼԱԻՍԱԳՈՅՆ ԳԻՆ ԼԱԻՍԱԳՈՅՆ ՁԵՐԶՈՎ

ԿԱՆԵՆԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆ

ԳԻՆԵՑԷՔ Կ. ՊՈԼԻՍ ԽՈՐԱՄԱՆԿԱՆ ԽԱՆՔ ՕՂԱՆԵՆԻՍ ԷՍԿԻՆԱՆ ԳՐԱՄԱՆ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Ս ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
[5000]Է ԱՒԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մառնի, ասեղ, եայլն. նաև անուններու սկզբնատառով գոհարապարզ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ շրջագգեստի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խստա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնա, Նովման) եայլն:

Ունինք նաև եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաև բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ և ըն:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաև իր ապրանք տոկունութիւնը, նրբութիւնը և աժաանութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

Շարաթական և ամսաշան վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐԾԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50—44

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ
ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ԳԻՇԵՐՈՒԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ
Կ. Պոլիս, Գասք-գիւղ, Մէօհիւրսար
նասէսի:

Շրդ Տարեօրհան

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, տոհմային ուսումներէ և գիտական քանդակաւոր ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգղիերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօ-

սելավարժութեամբ (բոսքիք), ինչպէս նաև Գծագրութիւն, Տնարարութիւն, Կարու Զե, Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեռքով և մեքենայով), ձայնական և գործիական Երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Զութակ: Գիշերօթիկները կը վայելեն կատարեալ սնունդ և բնականական անթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ:

Բանակցութեան համար դիմել ի վարժարան առ Տեսուչն կամ առ Տեսուհին: Մասնաւորապէս տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ, Գշ. Եշ. Շք. օրերը ժամը 5 էն 9 զիմուով ի Գրատուն «ԳԱՐՈՒՆ», Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55:

Աշակերտահետց վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր:

Հիմնադիր-Տնօրէն

Ե. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ